ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երաժշտական դաստիարակության խնդիրներից է ձևավորել և կատարելագործել երեխաների երաժշտական ճաշակը, նրանց մեջ սերմանել գեղագիտական ճաշակ, արթնացնել և ճանաչել տալ սեփական, ազգային երաժշտությունը, սիրել, սովորել, պահպանել ու փոխանցել այն, նաև դրսևորեն հարգանք այլ ազգերի երաժշտության հանդեպ: Կոմիտասը գտնում էր, որ յուրաքանչյուրի սուրբ պարտքն է լավ իմանալ իր ժողովրդի թե՛ մայրենի և թե՛ ազգային երաժշտության լեզուն:

Իմ Հետազոտական աշխատանքի նպատակը կայանում է. ներկայցնել «Երաժշտություն» առարկայի դասավանդման ընթացքում կիրառվող, ինչպես նաև մանկավարժական պրակտիկայի ընթացքում իմ ստեղծած նոր մեթոդները:

Հանրակրթական դպրոցի տարրական դասարաններում կրտսեր դպրոցականների երաժշտական կրթությունն ու դաստիարակությունը իրականացվում է երաժշտական գործունեության յոթ հիմնական տեսակների միջոցով: Դրանք են՝ երգեցողություն, երաժշտության ունկնդրում, երաժշտառիթմական շարժումներ և պար, երաժշտադիդակտիկ խաղեր, իմպրովիզացիա, երաժշտատեսական գիտելիքներ, նվագ մանկական նվագարաններով: Քանի որ կրտսեր դպրոցականների ուշադրության կենտրոնացումը փոքրաձավալ է, երաժշտության ուսուցիչը պետք է անընդհատ փոխի աշակերտների հետ տարվող երաժշտական գործունեության տեսակները:

Երգեցողությունը երաժշտական գործունեության հիմնական տեսակներից մեկն է, որի միջոցով դարեր շարունակ իրականացվել է կրտսեր դպրոցականների երաժշտական դաստիարակությունը: Երգեցողությունը նպաստում է երեխայի երգչական ունակությունների ձևավորմանը: Այն երեխայի երաժշտական գործունեության յուրահատուկ ձևերից է: Երգեցողության միջոցով նա մուտք է գործում երաժշտական աշխարհ՝ ինքը հանդես գալով որպես երգի անմիջական կատարողը: Երգեցողությունից է երեխան ստանում իր առաջին երաժշտական տպավորություններն ու զգայական ազդակները: «Երաժշտություն» առարկայի ծրագրում մեծ տեղ է հատկացվում հայկական ժողովրդական երգերին: «Դատարկ հնչումեն, դատարկ զգացում կառաջանա: Զգացումները կանոնավորելու, ուղղելու, զարգացնելու համար հարկավոր է յերգեցողության ավանդումին ուղղություն մը տալ»: Կոմիտաս (1,էջ66)

Պրոֆեսոր Յու. Յուզբաշյանը մեթոդական ձեռնարկում նշում է. «Երգեցողությունը համալիր բնույթ ունի: Երգեցողության ընթացքին մասնակցում է երեխայի ամբողջ օրգանիզմը, մասնավորապես նրա շնչառական, ձայնարտաբերող օրգանները և նյարդամկանային համակարգը»: (3,էջ 11)

Երեխաներին ծանոթացնելով հայկական ժողովրդական երգին՝ պետք է նրանց բացատրել նաև, որ տարբեր ազգեր ունեն իրենց ազգային և ժողովրդական երգերը, որոնցով և արտահայտվում է տվյալ ազգի ինքնատիպությունը և լեզվի առանձնահատկությունները: Բացի հայկական երգերից երեխաները պետք է

տեղեկություններ ստանան տարբեր ժողովուրդների և դարաշրջանների երաժշտության մասին: Տարրական դասարանների աշակերտների համար երգ ընտրելիս ուսուցիչը պետք է նախ և առաջ ուսումնասիրի երգի խոսքերը: Նախ ծանոթանալով երգի բառերին, այնուհետև աշակերտները սկսում են երգել:

Ուսուցիչը պետք է կարողանա կազմակերպել և ղեկավարել դասարանական երգեցողությունը: Սկսած առաջին դասարանից՝ աշակերտներին անհրաժեշտ է ծանոթացնել ճիշտ երգեցողության կանոններին և հետևել դրանց պահպանմանն ու զարգացմանը:

Անհրաժեշտ է երգեցողության ընթացքում հետևել ճիշտ երգեցողության կանոնների պահպանմանը, քանի որ կրտսեր դպրոցականի երգչային ապարատը գտնվում է զարգացման փուլում և սխալ ծանրաբեռնելու շնորհիվ կարող է վնասվել ձայնային ապարատը: Տարրական դասարանների դասագրքերում տրվում են այն բոլոր կանոնները, որոնք անհրաժեշտ են երգեցողության գործընթացը ճիշտ կազմակերպելու համար: Երգչային ձայնի զարգացումը ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտ է, որ երեխան իմանա երգեցողության որոշակի կանոններ: Յու. Վ. Յուզբաշյանը «Երաժշտություն» դասագրքի մեջ հստակ ներկայացրել է ճիշտ երգեցողության կանոնները.

1. Երգելու ժամանակ նստիր կամ կանգնիր ուղիղ:
2. Շունչ վերցրու հանգիստ, ուսերդ մի բարձրացրու:
3. Երգելու ժամանակ ձայնավոր հնչյունները երկարաձգիր, իսկ բաղաձայնները՝ կատարիր կարճ և հստակ:
4. Խմբական երգեցողության ժամանակ լսիր ընկերներիդ և երգիր նրանց հետ միասին: Երգիր այնպես, որ ձայնդ չառանձնանա:
5. Երգեցողության ժամանակ եղիր ուշադիր և ճիշտ կատարիր ուսուցչիդ ցուցումները:
6. Ճիշտ վերարտադրիր երգի իմաստը և մեղեդու բնույթը, այն կատարիր արտահայտիչ:
7. Երկձայն երգելու համար երկու ձայներն էլ լավ սովորիր:
8. Երկձայն երգեցողության ժամանակ ճիշտ երգիր քո ձայնաբաժինը և ուշադիր լսիր մյուսը:

Ուսուցիչը պետք է մեծ ուշադրությամբ հետևի յուրաքանչյուր երեխայի ճիշտ երգեցողությանը, հետևի երեխայի նստած կամ կանգնած դիրքին , ճիշտ շնչառությանը և աշակերտի մոտ լարվածություն նկատելու դեպքում ուսուցիչը պետք է փոխի երաժշտական գործունեության տեսակը, երեխային բերի հանգիստ վիճակի, հետո նոր շարունակի երգեցողությունը: Ըստ պրոֆ. Յու. Վ. Յուզբաշյանի. «Ինչ ենք հասկանում պահպանել և զարգացնել երեխայի երգչային ձայնը ասելով: Երեխան չպետք է շատ և ուժեղ երգի, երգչային ձայնը չհոգնեցնի, չգոռա, տաքացած ձայնալարերով սառը ջուր չխմի և այլն, որոնք վնաս են հասցնում մանկական ձայնին: Բնական ձայնով երգելու համար անհրաժեշտ է երգել թեթև, առանց լարվելու, միջին ուժգնությամբ, հստակ արտասանությամբ: Դրան կարելի է հասնել ոչ թե ճիշտ շնչառության մասին շատ խոսելով, այլ ճիշտ և գեղեցիկ ձայնով երգելով: Կարելի է երգեցողության ժամանակ ցույց տալ բերանի ճիշտ բացվածքը, մասնավորապես՝ ձայնավոր հնչյունների երգելու ժամանակ ձայնավորները երկարաձգելով, իսկ բաղաձայնները հստակ, փափուկ արտասանելով: Ճիշտ և գեղեցիկ երգեցողությունը, գեղեցիկ տեմբրով ձայն ունենալը երգչային ձայնի ճիշտ զարգացման կարևոր պայմաններից են»: (3,էջ 11)

Այնուամենայնիվ, երեխայի ճիշտ երգեցողությունը պետք է միշտ լինի ուսուցչի ուշադրության կենտրոնում:

Պակաս կարևոր չէ նաև ճիշտ արտաշնչումը, որի ընթացքում ձևավորվում է հնչյունի ճիշտ արտաբերումը: Որոշակի վարժությունների միջոցով ուսուցիչը պետք է սովորեցնի երեխային երգելիս արտաշնչել հանգիստ, դանդաղ: Սկզբում երգում են երկար տևողության հնչյուններ, այնուհետև, աշխատանքի ընթացքում, աստիճանաբար, երգվող հնչյունի տևողությունը ավելի է երկարեցվում, որի շնորհիվ երեխայի մեջ ձևավորվում է երգչային երկարաձիգ արտաշնչումը, որից էլ անմիջապես կախում ունի երգչային ձայնի որակը:

Ուսուցչի ճիշտ երգեցողությունը և պատկերավոր համեմատություններն օգնում են երեխային ավելի լավ հասկանալու առաջադրանքը: Օրինակ՝ կարելի է շնչելու ժամանակ փակել աչքերը և այնպես հանգիստ շնչել, կարծես թե նոր ես արթնանում քնից. «Շունչ պետք է առնել այնպես, կարծես բուրումնավետ ծաղկից հոտ ես քաշում», կամ «Շունչ առնելուց հետո անհրաժեշտ է շնչառությունը քիչ պահել,

հետո սկսել երգել: Արտաշունչը պետք է կատարել դանդաղ, սահուն, երկարաձգված, հավասար, կարծես փչում ես վառվող մոմի կրակի լեզվակին, բայց ոչ հանգցնելու նպատակով»:

Երաժշտության ունկնդրումը տարրական դպրոցների երաժշտական գործունեության տեսակներից մեկն է և այն կարևոր տեղ է զբաղեցնում երեխաների երաժշտական դաստիարակության գործում: Ունկնդրումը երաժշտական ճաշակի զարգացման հիմքն է: Կրտսեր դպրոցականների համար մատչելի է երգային ժանրը, որտեղ կա խոսք, շարժում, երբ այն ունի ուրախ տրամադրություն: Անշուշտ, ավելի հասկանալի է լինում, երբ երգը հնչում է միաձայն, հետաքրքիր նվագակցությամբ: Սակայն բացի երգային ժանրից, նրանք լսում են նաև նվագարանային դասական երաժշտություն, մանրանվագներ, հատվածներ օպերայից, բալետային և սիմֆոնիկ ստեղծագործություններից, որոնք հնչողությամբ մատչելի են երեխաների համար: Այդ ստեղծագործությունները հաճախ կապված են լինում երեխայի շրջապատի, բնության երևույթների, տարվա ամիսների, տոների հետ:

Դպրոցում երաժշտության ունկնդրման նպատակն է սովորեցնել ուշադիր լսել և հասկանալ երաժշտությունը, ցույց տալ երաժշտության գեղեցկությունը, կարողանալ վերլուծել այն: Ունկնդրման համար ընտրված երաժշտական ստեղծագործությունները պետք է լինեն ոչ ծավալուն, ցայտուն երաժշտական կերպարներով հարուստ, որոնք երեխաների մեջ առաջ բերեն շարժումներ կատարելու ցանկություն:

Ձայնագրությունները պետք է ցուցադրել որոշակի նախապատրաստական աշխատանքից հետո: Ձայնագրությունների տևողությունը պետք է կապվի երեխաների տարիքային առանձնահատկությունների հետ, նրանց՝ երաժշտություն ունկնդրելու փորձի հետ: Երաժշտություն կարելի է լսել դասի ցանկացած ժամանակահատվածում: Երաժշտության ունկնդրումից առաջ խորհուրդ չի տրվում երաժշտական ստեղծագործության մասին բացատրություն տալ: Չպետք է երեխաներին դնել ուրիշի զգացմունքների և հույզերի ազդեցության տակ: Ինչպես նշել է Կաբալևսկին. «... ոչ միայն դիտել և զգայաբար ընկալել այս կամ այն երևույթը, այլ մտորել դրա մասին, տվյալ դեպքում՝ ոչ միայն լսել ու իմանալ երաժշտությունը, այլև մտորել նրա մասին»:(9) Ունկնդրումից հետո պետք է երեխաներին հնարավորություն

տալ մտորելու լսածի մասին, արտահայտելու իրենց տպավորությունները: Երաժշտությունից ստացած տպավորությունների արտահայտման ձևերից մեկն էլ նկարելն է, որի ընթացքում երեխաներն իրենց զգացումները վերարտադրում են գույների և երանգների միջոցով:

Ցանկալի է սկզբնական շրջանում երեխաներին հանձնարարել ունկնդրել միայն երգեր, պարզ նվագարանային ստեղծագործություններ, երեխաների համար ստեղծել բարենպաստ պայմաններ, երաժշտություն ունկնդրելու համապատասխան մթնոլորտ, հանգիստ դրություն: Այդ վիճակը երեխաների ուշադրությունը բևեռում է հնչող երաժշտության հուզականության վրա, որն ակտիվացնում է ընկալումը և նրա մեջ առաջ բերում համապատասխան զգացմունքներ, տրամադրություն: Պետք է երեխաները զգան, որ երաժշտական գործունեության բոլոր տեսակների հիմքում կա երաժշտության ունկնդրման պահ: Ունկնդրվող տեղծագործության կամ երգի կրկնությունը նույնպես պետք է բխի երեխաների պահանջից: Նրանք պետք է արտահայտեն երաժշտությունից ստացած իրենց ինքնուրույն, անհատական տպավորությունները: Երկրորդ անգամ ունկնդրումից առաջ, որպես լրացում, ուսուցիչը կարող է տալ բովանդակային որոշ բացատրություններ՝ կապված ունկնդրվող երաժշտական ստեղծագործության հետ: Եթե ունկնդրվող ստեղծագործությունը երգ է, ապա դրա կատարումը կարող է տևել մի քանի րոպե: Անհրաժեշտ է այդ կարճ ժամանակահատվածում երեխաների մեջ առաջ բերել որոշակի հետաքրքրություն և համապատասխան զգացմունքներ, մանավանդ եթե երաժշտական ստեղծագործությունը արտահայտում է երեխային շրջապատող երևույթները, առօրյա կյանքը: Երեխաների ապրումները կարելի է զգալ նրանց շարժումներից, դեմքի արտահայտությունից, խոսելու ինտոնացիայից: Երաժշտության ունկնդրումով երեխաների մեջ առաջ են գալիս ոչ միայն գեղագիտական զգացմունքներ, այլև նրանք ստանում են երաժշտատեսական գիտելիքներ, ինչպես օրինակ՝ օրորոցային երգով ծանոթանում են դանդաղ հասկացողությանը, աշխույժ պարերգով՝ արագ, իսկ քայլերգային երաժշտության կատարմամբ՝ միջին արագություն հասկացողություններին: Այսպես սկսվում է երաժշտության ընկալման գիտակցված շրջանը՝ դանդաղ, միջին և արագ հասկացությունները: Երաժշտության միջոցով դառնում են իմաստալից և ավելի զգայական: Այս սկզբունքով հնարավոր է

դառնում երգերի կատարման միջոցով երեխաներին ծանոթացնել զարկ, ռիթմ, մեղմ, ուժեղ, կարճ, երկար, երաժշտական հասկացողություններին:

Հնարավոր չէ երգել, պարել, նվագել, ստեղծագործել, եթե չես կարող ունկնդրել, ճիշտ ընկալել երաժշտությունը: Տարրական դասարաններում ուսուցչի առաջնահերթ խնդիրներից մեկը երեխաներին ուշադիր ունկնդրել սովորեցնելն է, մասնավորապես՝ 6-7 տարեկան երեխաները դեռ չեն կարողանում երկար ժամանակ ուշադրությունը կենտրոնացնել: Աշակերտներն ունկնդրում են թեմայի հետ կապված համապատասխան ստեղծագործություններ և երգում երգեր:

Ունկնդրման ժամանակ երեխաներին պետք է սովորեցնել ոչ թե պասիվ լսել, այլ կարողանալ հետևել երաժշտության ընթացքին: Անհրաժեշտ է նրանց ուշադրությունը կենտրոնացնել ստեղծագործրության տեսակի (երգ, պար, քայլերգ), բնույթի (ուրախ, տխուր), տեմպի զարկերի, ֆրազների նմանության կամ տարբերության, մեղեդու հնչյունների շարժման ուղղության վրա: Երաժշտության ընկալումն ակտիվանում է և դառնում ավելի հուզական, երբ երեխաները, երաժշտության բնույթին համապատասխան, կատարում են ձեռքերի, մարմնի շարժումներ:

Ունկնդրման համար նախատեսված ստեղծագործությունների մի մասը կատարում է ուսուցիչը (երգում է, նվագում), իսկ հիմնական մասը երեխաները լսում են ձայնագրությունների հնչեցման միջոցով:

Երաժշտությունը ունկնդրելիս երեխաները տարբեր ձևով են ընկալում այն. որոշ աշակերտներ հիանում են երաժշտության ֆիզիկական գեղեցկությամբ, ոմանք արձագանքում են միայն հույզերով համակված, որոշ երեխաներ երգը ունկնդրելիս ուշադրություն են դարձնում միայն բառերին, իսկ մյուս մասն էլ՝ միայն երաժշտությանը: Այսպես՝ երեխաները բաժանվում են երկու խմբի. երեխաների մի մասը արագ են սովորում երգի բառերը, իսկ մյուս մասը՝ երաժշտությունը: Նույն երաժշտությունը ունկնդրում են ամբողջ դասարանով, բայց, ելնելով իր բնավորության բանական և հուզական տվյալներից, յուրաքանչյուր աշակերտ այն ընկալում է յուրովի:

Ինչպես անցյալն է ազդում երեխաների վրա մեր նախնիների միջոցով , այնպես էլ անցյալից եկած երգերը: Այդ երգերը մեր պատմությունն են և չեն կարող իրենց

հետքը չթողնել երեխաների երաժշտական դաստիարակության վրա: Ունկնդրելով ազգային երաժշտությունը, ենթարկվելով դրա առաջացրած տրամադրությանը՝ նրանք իրենց երևակայության մեջ պետք է ստեղծեն ինչ-որ պատմություններ, պատկերներ, այնուհետև փորձեն այն գրել կամ պատկերել գույների միջոցով:

Գույների մեջ կան հնչյուններ, և յուրաքանչյուր հնչյունի մեջ՝ գույն: Ինչպես նշել է Լեոպոլդ Ստոկովսկին. «իրենց ինչ-որ հատկություններով հնչյունը և գույնը նման գծեր ունեն: Ե՛վ հնչյունը և՛ գույնը ունեն հաճախականություն, լարվածություն, տևողության հատկություններ: Ինչպես գեղանկարչության մեջ կան գունավորման լարվածության տարբեր աստիճաններ, այնպես էլ երաժշտության մեջ կա հնչյունի լարվածության բազմազանություն»:(էջ5)

Ունկնդրվող նյութերը նպատակ ունեն զարգացնել երեխաների երաժշտական, գեղագիտական ճաշակը, այդ իսկ պատճառով ունկնդրման համար պետք է ընտրել ազգային, հոգևոր, հայ և համաշխարհային դասական լավագույն ստեղծագործությունները: Ունկնդրվող ստեղծագործությունների ցանկը տրվում է «երաժշտություն» առարկայի ծրագրում՝ ըստ դասարանների և թեմաների, որտեղ մեծ տեղ է հատկացված հայկական ժողովրդական երաժշտությանը: Երաժշտության ունկնդրումը նպաստում է կրտսեր դպրոցականի երաժշտական մտահորիզոնի ընդլայնմանը և գեղագիտական ճաշակի ձևավորմանը:

Ունկնդրումը հարկավոր է կազմակերպել այնպես, որ սովորողը կարողանա ոչ միայն լսել, այլև ընկալել ստեղծագործությունը: Ունկնդրման համար ընտրված նյութը պետք է լինի համապատասխան երեխաների տարիքին, ընդունակություններին և երաժշտությունը հասկանալու աստիճանին: Աշակերտները պետք է իրենց ունկնդրած երաժշտությունից ինքնուրույն հետևություններ անեն, որոշեն ստեղծագործության բնույթը և տեսակը: Այդ պատճառով ուսուցիչը պետք է իր՝ արդեն պատրաստի պատասխաններից զերծ պահի աշակերտներին: Այդպիսով աշակերտները սովորում են ինքնուրույն մտածել և նրանց երաժշտական ընկալումը դառնում է ավելի ակտիվ և ճկուն:

Երաժշտառիթմական շարժումը և պարը ևս տարրական դպրոցներում կիրառվող երաժշտական գործունեության տեսակ է: Առաջին դասարանցիները սովորում են քայլերգի հնչյունների տակ կատարել երաժշտառիթմական շարժումներ:

Տարրական դասարանների երաժշտության ծրագրում կան մի շարք քայլերգի տեմպով գրված երգեր, որոնք սովորելուց հետո աշակերտները մեծ սիրով երգում և քայլում են երգի տեմպին և ռիթմին համապատասխան: Քայլերգի երաժշտության ռիթմը մարդու վրա ներգործելու առանձնակի ուժ ունի, ինչի շնորհիվ այն առաջացնում է զգայաշարժական ազդեցություն, որն արտահայտվում է գլխի, ձեռքերի, ոտքերի, դեմքի, մարմնի մկանների, նույնիսկ ձայնալարերի շարժման միջոցով: Ուրեմն՝ երաժշտության ռիթմը մարդն ընկալում է ամբողջ էությամբ և արտահայտում մարմնի շարժումներով: Այս առումով ռիթմը շատ ավելի հեշտ է ընկալվում և վերարտադրվում մարմնի շարժումներով, քան մեղեդին՝ ձայնով: Երաժշտության ծրագրով նախատեսված պարերգերը կրտսեր դպրոցականները նախ սովորում են երգել, այնուհետև՝ կատարում պարային կամ ցուցադրական շարժումների զուգորդմամբ: Երաժշտության ուսուցչի համար նախատեսված մեթոդական ձեռնարկներում տրվում են երաժշտության ծրագրով նախատեսված պարերգերի նկարագրություններ: Երաժշտության ուսուցիչը պետք է կարողանա տրված շարժումների միջոցով ուսուցանել պարերգը կատարել հաստատագրված պարային շարժումներով:

Առանց ռիթմական զգացողության հնարավոր չէ աշակերտներին սովորեցնել ճիշտ պարել, չէ որ պարի հիմքը կազմում է ռիթմը: Աշակերտների մոտ ռիթմական զգացողության զարգացման համար բացի ձեռքերը և ոտքերը բախելուց, ծափելուց, կամ տարբեր հարվածային գործիքներ օգտագործելուց, կարելի է ռիթմի մասին նրանց բացատրել նաև մեխանիկական գործիքների, բնության մեջ կատարվող երևույթների միջոցով, օրինակ՝ աշխատող մեքենաներն ունեն իրենց ռիթմը, շատ գրավիչ են ձիարշավների, ձիերի քառատրոփ ռիթմերը, սլացող գնացքի վագոնների անիվներին բնորոշ, ռիթմիկ փխկփխկոցը: Յուրաքանչյուր երգի հիմքում ընկած է բնույթին, բովանդակությանը համապատասխան ռիթմական պատկեր:

Երաժշտառիթմական շարժումները և պարը նպաստում են երեխայի ընդհանուր երաժշտական ընդունակությունների, մասնավորապես՝ ռիթմական զգացողության ակտիվ զարգացմանը, հղկում, կատարելագործում են երեխայի շարժումները:

Չնայած, որ երգը և պարը ինքնուրույն արվեստներ են, այնուամենայնիվ, զուգակցվելով հաճախ փոխադարձաբար հարստացնում են միմյանց: Պարի և երգի հիմքում ընկած հիմնական տարրը ռիթմն է: Ժողովրդական երգը շատ հաճախ կազմում է ժողովրդական պարի հիմքը: Լսելով ժողովրդական երգը՝ աշակերտների մոտ շարժվելու ցանկություն է առաջանում. նրանք սկսում են շարժել ձեռքերը, ոտքերով դոփել, գլուխը օրորել:

Ավելորդ էներգիայի լիցքաթափման շնորհիվ կենտրոնանում և ակտիվանում է երեխայի ուշադրությունը: Մի շարք երկրներում երաժշտական դաստիարակության բնագավառում կիրառվում է Էմիլ Ժակ Դալկրոզի երաժշտառիթմական դաստիարակության համակարգը, որը նպաստում է կրտսեր դպրոցականների երաժշտառիթմական դաստիարակության գործընթացին:

Երաժշտադիդակտիկ խաղերը երաժշտական գործունեության յոթ տեսակներից մեկն է և լայնորեն կիրառվում է կրտսեր դպրոցականների երաժշտական դաստիարակությունը ամբողջական դարձնելու համար: Այն նպատակ ունի դասապրոցեսը ավելի հետաքրքիր դարձնել և թեման երեխայի հիշողության մեջ ավելի տպավորել: Երեխաները խաղի հետ ծանոթանում են դեռևս շատ վաղ տարիքից տանը կամ նախակրթարանում, այնուհետև այն արդեն ավելի լայնորեն ու նպատակային կիրառվում է հանրակրթական դպրոցի տարրական դասարանների ծրագրում: Ինչպես նշում է Կարինե Ղազարյանը իր «Երաժշտադիդակտիտ խաղեր» գրքում. «Երաժշտադիդակտիկ խաղերի օգտագործմամբ պարապմունքները դառնում են առավել բովանդակալից: Պարապմունքների ժամանակ անցկացվող խաղի միջոցով երեխաներն ավելի արագ են յուրացնում թե՛ երգչային, թե՛ երաժշտառիթմական շարժումների և ունկնդրման ծրագրային պահանջները»:(10,էջ8) Երաժշտադիդակտիկ խաղերը կիրառվում են երգեցողության, երաժշտության ունկնդրման և ռիթմական շարժման ընթացքում:

Երաժշտադիդակտիկ խաղերը կազմակերպվում են դպրոցական ծրագրին համապատասխան և աստիճանաբար զարգանում՝ հաշվի առնելով երաժշտական դաստիարակության խնդիրները: Երաժշտադիդակտիկ խաղից առաջ ուսուցիչը պետք է նախ աշակերտներին ծանոթացնի խաղի կանոններին և հստակ բացատրի հանձնարարությունը, այնպես որ այն հասկանալի լինի բոլորի համար: Խաղերը

անցկացվում են նաև մրցութային ձևով, ինչպես նաև՝ մանկական նվագարանների միջոցով:

Երաժշտության ուսուցիչը, նկատելով աշակերտների լարվածությունը և հոգնածությունը, կարող է ուսուցանվող թեմայի վերաբերյալ կազմակերպել երաժշտադիդակտիկ կամ ուսուցման գործընթացը ակտիվացնող խաղեր, որոնց շնորհիվ աշակերտները հեշտությամբ յուրացնում են դասավանդվող նյութը և դուրս գալիս լարված վիճակից: Տարրական դասարաններում կրտսեր դպրոցականները հաճույքով և սիրով մասնակցում են երաժշտադիդակտիկ խաղերի, որոնց շնորհիվ բարձրանում է աշակերտների ակտիվությունը և ընկալունակության ծավալը:

Իմպրովիզացիան երաժշտական գործունեության կարևոր տեսակներից մեկն է, և Ժամանակակից դպրոցում պետք է մեծ ուշադրություն նվիրել երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Իմպրովիզացիան նպաստում է կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտքի զարգացմանը՝ հնարավորություն ստեղծելով, որ երեխաները ոչ միայն լսեն և կատարեն երաժշտական ստեղծագործություններ, այլ նաև՝ հորինեն նոր երգեր և մեղեդիներ:

Երեխաների մոտ իմպրովիզացիան զարգացնելու համար, պետք է զարգացնել բառերի տակ թաքնված երաժշտությունը և երաժշտության տակ թաքնված բառեր ընկալելու կարողությունը: Ինչպես նշել է Լեոպոլդ Ստոկովսկին. «Երաժշտությունը հնչյուններով արտահայտված պոեզիա է»: (ձ,էջ9) «Երաժիշտը պետք է բանաստեղծ լինի, իսկ բանաստեղծը՝ երաժիշտ: Երբ պոեզիան հասնում է բարձրագույն գեղեցկության, այն երաժշտություն է դառնում»: (2,էջ13)

Բոլոր դեպքերում անհրաժեշտ է, որ բառի շեշտը համընկնի երաժշտության շեշտի հետ: Երեխաների մոտ իմպրովիզացիոն զարգացումը կարելի է կազմակերպել տարբեր ձևերով. սկսել մեկ բառից, կամ մեկ հնչյունից: Երբ նրանք կարողանան մի բառը գեղեցիկ երգել մեկ կամ մի քանի հնչյուններով, դա արդեն կարելի է համարել իմպրովիզացիայի սկիզբ: Նախօրոք գրել երգի բառերը, կարդալ այն ամբողջությամբ, այնուհետև, նրա բովանդակության հիման վրա, հորինել մեղեդին, կամ՝ հակառակը. սկզբից հորինել մեղեդին, այնուհետև՝ գրել բառերը: Երեխաներին պետք է սովորեցնել լսել և հնչյուններով կամ բառերով արտահայտել բնության երաժշտությունը. քամու

ժամանակ տերևների սոսափյունը, միջատների նուրբ բզզոցը, թռչունների երգը, օվկիանոսի ալեբախության աղմուկը, խաղաղ օրերին ջրի ճողփյունը մերձափնյա ժայռերին լիրիկական երաժշտություն է ստեղծում, հերոսական երաժշտություն է ստեղծում օվկիանոսի տարերքի երաժշտությունը, երբ մոլեգնում է փոթորիկը, սուլում և ոռնում քամին: Աշակերտներին պետք է սովորեցնել նաև լսել խաղաղ օրերին բնության մեջ հնչող լուռ մեղեդին:

Դեռևս շատ վաղ հասակից խաղալիս, քայլելիս կամ պարելիս երեխաները հաճախ սկսում են երգել: Երբեմն երգում են իրենց սեփական լեզվի հորինած բառերով , երբեմն՝ մայրենի լեզվի: Մերթ այն առանց խոսքերի պարզ մեղեդի է, մերթ՝ ուրախ և փութկոտ բացականչություններ հիշեցնող, ռիթմի ենթարկված հնչյուններ: Այդպես երեխան արտահայտում է իր տրամադրությունը: Երեխաները անգիտակցաբար ստեղծում են ռիթմեր, մեղեդիներ և բառեր: Հետագայում, դպրոցում խրախուսելով աշակերտների ակամա ստեղծած ստեղծագործությունը, սովորեցնելով նրանց իրենց երգերը դարձնել կենցաղի, խաղերի մշտական մասնիկը, մենք կկարողանանք գտնել նրանց ստեղծագործական ուժերի զարգացման ուղիները: Երբ դասարանում աշակերտը գրում է որևէ երգ, ուսուցիչը նրան պետք է ոգևորի, խրախուսի: Կարելի է, օրինակ, ասել. «Ապա, եկ մի հատ քո երգը երգենք», կամ՝ այդ երգը սովորեցնի մյուս աշակերտներին, և նրանք կատարեն դա: Այդ դեպքում աշակերտի մոտ առաջանում է հեղինակային հպարտություն, և նա արդեն սկսում է աշխատել գրել նոր երգեր:

Իմպրովիզացիայի տարրերի ուսուցումը պետք է սկսել նախ երաժշտառիթմական շարժումից ու պարից, այնուհետև անցնել ձայնին և մանկական նվագարաններին: Երաժշտության բնույթին և բովանդակությանը համապատասխան հանպատրաստից արտահայտիչ պատկերավոր շարժումներ ստեղծելն արդեն ինքնուրույն ստեղծագործական գործընթաց է:

Իմպրովիզացիայի տեսակներից է ունկնդրվող կամ կատարվող ստեղծագործությունների համար ռիթմական նվագակցություններ ստեղծելը: Ռիթմական նվագակցությունը կարելի է կատարել «բնական» կամ ռիթմական նվագարաններով, մենակ, կամ՝ խմբով: Օրինակ՝ երեխաներից մեկը ոտքի թաթով հարվածում է մեղեդու ուժեղ, իսկ ծափով՝ թույլ մասը, կամ՝ ուժեղ մասը թմբուկով

նվագում է մի խումբը, իսկ թույլ մասը՝ եռանկյունով մյուս խումբը: Մի երեխա էլ դհոլով նվագում է երգի կամ պարեղանակի ռիթմը: Եթե սկզբում երեխան հորինում է ենթագիտակցորեն՝ հենվելով սեփական համեստ երաժշտական փորձի վրա, ապա ժամանակի ընթացքում երաժշտական որոշ գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելով, երեխան կարողանում է ավելի գիտակցված մոտենալ ստեղծագործությանը: Նա արդեն մեղեդու բնույթը, տրամադրությունը կապում է տեմպի ռիթմի, լադի, ձայնաստիճանների փոխհարաբերության, երաժշտության շարժման ուղղության, հնչողության ուժի հետ:

Մանկավարժական տեսակետից շատ օգտակար է կիրառել հետևյալ ձևը. գրատախտակի մոտ իր ստեղծած մեղեդին երգում, տարբերակում է ոչ թե ուսուցիչը, այլ՝ նրա ընտրությամբ որևէ ընդունակ երեխա, իսկ դասարանը, որպես «արձագանք», լրացնում է ուսուցչի երգած տարբերակներով: Դրանցից ամենահաջողը դասարանի ընտրությամբ սովորում են բոլորը, որոշում տեմպը, զարկերը, ռիթմը, երգում ձեռքի նշաններով:

Հանձնարարվում է ստեղծել մեղեդիներ, որոնք արտահայտեն որևէ զգացում, ասենք՝ ուրախ առույգ տրամադրություն: Այնուհետև այդ մեղեդիները փոխել այնպես, որ արտահայտի տխրություն, թախիծ: Նման հանձնարարություն իրագործելու համար անհրաժեշտ է, որ աշակերտներն օգտագործեն երաժշտական արտահայտչական միջոցները՝ տեմպը, հնչողության ուժգնությունը (դինամիկան), տարբեր ձայնասահմանների (ռեգիստր) ռիթմը, արտաբերման այլ եղանակներ: Երեխաներին հանձնարարվում է երաժշտության բնույթին համապատասխան ստեղծել հարուստ դինամիկայով օժտված ռիթմական նվագակցություններ՝ օգտագործելով բազմապիսի հնչերանգներ ունեցող ռիթմական նվագարաններ:

Նախորդ դարի 20-ական թվականներին, անվանի կոմպոզիտոր և մանկավարժ Կարլ Օրֆը Վիեննայում հիմնադրում է երաժշտամանկավարժական կրթօջախ, որտեղ սովորում են երաժիշտ-մանկավարժները՝ միաժամանակ դասավանդելով նույն կրթօջախում սովորող աշակերտներին: Կրթօջախում ուսուցումը կազմակերպվում է ստեղծագործական ունակությունների զարգացման միջոցով: Այս նպատակով Կառլ Օրֆը կազմում է «Շուլվերերգե» ուսումնամեթոդական ձեռնարկը, ըստ որի բոլոր երեխաները երաժշտություն պետք է սովորեն ստեղծագործելու

միջոցով: Ձեռնարկում մեծ տեղ է հատկացված ազգային երաժշտության ունկնդրմանը, որի հիման վրա աշակերտները նախ պետք է կատարեն իմպրովիզացիաներ ունկնդրած երաժշտության շնորհիվ:

Հանպատրաստից ստեղծագործելը զարգացնելու նպատակով, հանրակրթական դպրոցի առաջին դասարանում, ուսուցիչը աշակերտների հետ ծանոթանալիս, անցկացնում է «ինչ է քո անունը» խաղ-իմպրովիզացիան, որի ընթացքում յուրաքանչյուր աշակերտ հանպատրաստից հորինում է իր անվան մեղեդին: Ուսուցչի հարցը պետք է ավարտվի անկայուն հնչյունով, իսկ աշակերտինը՝ կայուն:

Փորձը ցույց է տվել, որ յուրաքանչյուր երեխա ունի այս կամ այն չափով երաժշտական ստեղծագործական ընդունակություն: Մնում է գտնել այն զարգացնելու ճիշտ ճանապարհը: Իմպրովիզացիայի մեթոդիկայի մշակումը դեռ ընթացքի մեջ է: Այս խնդրում էական ներդրում կարող է ունենալ յուրաքանչյուր ուսուցիչ՝ իր բնատուր շնորհքով, երևակայությամբ և անձնական նախաձեռնությամբ: Հանպատրաստից հորինելը՝ իմպրովիզացիան, անհատական գործունեության ձև է: Այս ասպարեզում առավել ակտիվ և ոչ ակտիվ երեխաների միջև տարբերությունը մեծ է: Ինչպես կազմակերպել և միավորել այդ երկու տարբեր օժտվածության խմբերի գործունեությունը՝ ահա առաջին խնդիրը, որ ծառանում է դասարանում իմպրովիզացիա կիրառելիս:

Ըստ պրոֆեսոր Յու. Յուզբաշյանի՝ «Կարևոր չէ, թե երեխան հետագայում ինչ մասնագիտություն կընտրի՝ երաժիշտ, ուսուցիչ, թե՝ բժիշկ... կարևորն այն է, որ իմպրովիզացիան խթանում է երեխայի ստեղծագործական երևակայությունը, զարգացնում պատկերավոր մտածողությունը, հարստացնում նրա ներաշխարհը, ուրեմն և՝ կրթում հոգին»: (3,էջ 33)

Երաժտատեսական գիտելիքները աշակերտների երաժշտական դաստիարակության կարևոր մասն են կազմում: Տեսական գիտելիքներից հանրակրթական դպրոցի տարրական դասարանի աշակերտներին ուսուցանվում է լադային և ռիթմական լսողությունների զարգացում և նոտագրություն:

Աշակերտների երաժշտական դաստիարակությունը պետք է սկսել ռիթմական զարգացումից և նպատակահարմար է այն զարգացնել կենդանի երաժշտության

զուգորդմամբ, քանի որ առանց երաժշտության արտահայտված ռիթմական շարժումները չեն ազդում երեխայի հուզական աշխարհի վրա, ուստի և չեն կարող որևէ ունակություն զարգացնել:

Երեխայի ռիթմական զգացողությունը զարգանում է աստիճանաբար, դեռևս վաղ մանկության տարիներց, երբ նրանք սկսում են քայլել, վազել, պարել և այլն: Եվ արդեն այդ տարիքից կարելի է հետևություն անել, թե տվյալ երեխայի մոտ ռիթմական զգացողության զարգացումը ինչ հարթակի վրա է: Արդեն դպրոցում երեխայի ռիթմական զարգացումը սկսվում է պրոֆեսիոնալ հիմքերով: Դպրոցում երեխաների մոտ դանդաղ, միջին և արագ տեմպերը զարգացնելու համար կազմակերպում են մի շարք խաղեր. օրինակ՝ ուսուցիչը դասարանից ընտրում է երկու երեխա, նրանց հանձնարարում է մի տեղից մյուսն հասնել, մեկին հանձնարարում է քայլել դանդաղ, մյուսին՝ արագ: Մյուս աշակերտները հետևում են, թե ով ավելի ուշ կհասնի նպատակատեղին: Կամ՝ երկու երեխա երգում են, մեկը արագ, մյուսը՝ դանդաղ, իսկ մյուսները՝ հետևում: Կամ՝ երեխաներից մեկը երգի ռիթմը ծափում է արագ, մյուսը՝ դանդաղ, նորից երեխաները դիտում են և տարբերում դանդաղ ու արագ տեմպերը: Երբ երեխաները արդեն կարողանում են զգալ և տարբերել քառորդ և երկու ութերորդական հնչյունները, կարելի է նրանց ծանոթացնել ռիթմ հասկացությանը՝ ասելով, որ ռիթմը կարճ և երկար տևողության հնչյունների հաջորդականությունն է: Երբ մեկ հնչյունն իր տևողությամբ համընկնում է մեկ զարկի հետ, մենք այդ տևողությունն անվանում ենք «քայլ», իսկ երբ մեկ «քայլ» զարկի տակ կատարում ենք երկու կարճ հնչյուն, ապա դրանց տևողություններն անվանում ենք «վազել»: «Վազել» բառի յուրաքանչյուր վանկի տևողությունը մեկ ութերորդական է: Մեծ մասամբ մանկական երգերի մեղեդու ռիթմը բաղկացած է լինում «քայլ» և «վազել» տևողություններից: Այդ նպատակով առաջին դասարանում ուսուցանում ենք «Եկեք մրցենք» հայկական ժողովրդական երգը, որի առաջին մասը կազմված է քառորդ, իսկ երկրորդը՝ ութերորդական տևողության նոտաներից: Ավելի երկար տևողություն, ինչպիսին է 4/4-ը, համարյա չի հանդիպում: Պետք է ընտրել այնպիսի երգեր, որտեղ «քայլ» և «վազել» տևողությունները հաջորդեն միմյանց, որպեսզի երեխան զգա և տարբերի կարճ և երկար տևողությունները:

Երբ երեխան կարողանում է ընկալել երաժշտության զարկերի տարբեր արագության համաչափ բաբախյունը, նրան կարելի է ծանոթացնել տակտ և չափ հասկացություններին՝ սկսելով պարզ երկմաս և եռամաս տակտերից և չափերից, ցույց տալով տակտի շեշտված և անշեշտ մասերը: Քայլերգային և պարային բնույթի ստեղծագործություններում, տակտի ուժեղ մասերի առավել ցայտուն շեշտվածության շնորհիվ, երեխաների մեջ չափի զգացողությունն արմատավորելիս գերադասելի է օգտագործել համապատասխան երաժշտական ստեղծագործություն: Պատահական չէ, որ ուսուցիչները լայնորեն կիրառում են երեխաների քայլերգով դասարան մտնելը և դուրս գալը:

Երաժշտատեսական գիտելիքների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում նաև լադային լսողության զարգացումը: Այն համարվում է երաժշտական ընդունակությունների համակողմանի զարգացման հիմքերից մեկը: Երաժշտական լսողությունը լինում է լադային (հարաբերական), և տոնայնական (բացարձակ): Տոնայնական լսողությունը մարդուն տրված է լինում ի ծնե, մարդկանց մեծամասնության մոտ լսողությունը լադային է: Այդ հաշվի առնելով՝ մանկավարժները աշակերտների լսողությունը զարգացնում են հարաբերական ուղղությամբ: Եթե երեխան ունի բացարձակ լսողություն, միևնույն է լադային լսողության զարգացումը նույնպես պարտադիր է: Լադային լսողության զարգացման համար կիրառվում են մի շարք, արդեն փորձարկված հնարներ: Հիմնական միջոցներից մեկը երգեցողությունն է հնչյունների վանկային անուններով, այսինքն՝ սոլմիզացիան: Մանկավարժության մեջ չի կարելի մեկ լադի շրջանակում երկարատև սահմափակվել, քանի որ այն կարող է վնասակար լինել երեխայի ընկալունակության համար՝ դժվարացնելով մյուս լադերի յուրացումը: Այդ պատճառով լսողության զարգացման համար պետք է ոչ միայն կիրառել տարբեր լադերի օգտագործումը, այլև օգտագործել նույն լադի տարբեր տոնայնական բարձրություններ: Լադային լսողության զարգացման համար հանրակրթական դպրոցի երաժշտության ծրագրով նախատեսված են մի շարք մանկական ժողովարդական երգեր, որոնք ընդգրկվել են 2-րդ դասարանի «երաժշտություն» դասագրքի հավելվածում:

Երաժշտական գործունեության հաջորդ տեսակն է՝ նվագ մանկական նվագարաններով:

Տարրական դասարաններում աշակերտները օգտագործում են մանկական երաժշտական, «բնական» և ինքնաշեն հարվածային նվագարաններ: Ուսուցչը երաժշտության դասերի ընթացքում կարող է օգտագործել նաև նվագը դաշնամուրով, ջութակով, շվիով, մետաղաֆոնով, քսիլոֆոնով և այլ նվագարաններով: Այդ նվագարաններից մեկին կամ երկուսին տիրապետող ուսուցիչը լայն հնարավորություններ ունի երաժշտության դասը անցկացնելու հետաքրքիր՝ ստեղծելով երաժշտական մթնոլորտ: Ինչ վերաբերում է մանկական նվագարաններին, ապա յուրաքանչյուր երեխայի հնարավորություն է տրվում նվագել սովորելու այդ նվագարաններով (շվի, մետաղաֆոն, քսիլոֆոն, ռիթմական նվագարաններ՝ թմբուկ, դհոլ, դափ, զանգակներ, ծնծղաներ, մարակաս և այլն):

Նվագարանները երաժշտության դասը դարձնում են ոչ միայն հետաքրքիր, տպավորիչ, այլև՝ զգացմունքային: Նվագելով երեխան ավելի լավ է զգում երաժշտության բնույթը, տեմպը, ռիթմը, հնչյունների բարձրությունների փոխհարաբերությունը, երաժշտության կառուցվածքը և վերջապես, երաժշտական կերպարը: Նվագելը նաև աշխուժություն և հետաքրքրություն է առաջացնում, բարձրացնում երեխաների տրամադրությունը, դյուրացնում նյութի յուրացումը:

Դպրոցում օգտագործվելիք նվագարանները պետք է մաքուր լարվածք ունենան, որպեսզի ճիշտ զարգանա երեխաների երաժշտական լսողությունը: Առաջին և երկրորդ դասարաններում օգտագործվում են միայն հարվածային նվագարաններ (դափ, թմբուկ և այլն): Բարձրություն չունեցող նվագարանների խմբին կարելի է դասել նաև «բնական նվագարանները»՝ մարդու ձեռքերը և ոտքերը: Ծափերի, մատների ճտտոցների, ոտքի թաթի և կրունկի հարվածների օգնությամբ ստացված հնչյունները յուրահատուկ երանգ ունեն և կարող են օգտագործվել նվագակցության համար: Հնչյունների ուժգնությունն ու երանգը կախված են նրանցից, թե ամբողջ ափով ես ծափում, թե կես ափով, ափով ես հարվածում սեղանին, թմբուկին, դափին, թե մատների ծայրով: Մատների ճտտոցը պահանջում է որոշակի փորձ, միանգամից կարող է և չստացվել: «Բնական նվագարաններով» որոշակի հմտություն ձեռք բերելուց հետո միայն կարելի է անցնել հարվածային նվագարաններով նվագելուն (թմբուկ, դափ, եռանկյունի և այլն): Նվագարաններով նվագելը կարևոր դեր ունի ուսումնադաստիարակչական աշխատանքում: Երեխաների առնչվելը

նվագարանների հետ հետաքրքրություն ու սեր է առաջացնում երաժշտության նկատմամբ, ներգրավում է նրանց կենդանի երաժշտության մեջ, հաղորդակից դարձնում կատարողական արվեստին, օգնում զարգացնել երեխաների երաժշտական ունակություններն ու կարողությունները:

Դպրոցում նվագել ուսուցանելը կարելի է կազմակերպել թե՛ խմբական և թե՝ անհատական ձևերով: Երեխաները սկզբում սովորում են նվագել լսողությամբ, այնուհետև՝ երկրորդ դասարանում, նոտաներով: Նոտաներով նվագում են առանձին ռիթմական դարձվածքներ, ոչ մեծ ֆրազներ, նվագակցում անհատական և խմբական երգեցողությանը, զբաղվում իմպրովիզացիայով: Մանկական երաժշտական նվագարանների ուսուցումը ուսուցիչը կարող է կազմակերպել անհատական կամ խմբային ձևերով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր նվագարանի անհատականությունը: Որպես ռիթմական նվագարաններ կարելի է օգտագործել նաև մանկական չխկչխկան խաղալիքներ և ինքնաշեն փայտիկներ, տուփեր և այլն:

Երաժշտական գործունեության այս տեսակները հանդես են գալիս փոխկապակցված ձևով և նպաստում են մատուցվող նյութի համակողմանի յուրացմանը: Նաև նրանցից յուրաքանչյուրը հանդես է գալիս երգեցողության հետ: Երաժշտության հետ երեխայի հանդիպումը դպրոցում սկսվում է երգով, երաժշտական ստեղծագործությունների ունկնդրմամբ, հանպատրաստից ստեղծագործելով, երաժշտառիթմական շարժումներ կատարելով, մասնավորապես ռիթմական շարժումներ, որոնք առաջանում են նաև երգերի կատարումից և երաժշտության ունկնդրումից: Երգեցողությունը, զուգակցվելով երաժշտական գործունեության մյուս տեսակներին, նպաստում է երեխայի երաժշտական համակողմանի դաստիարակությանը: Երաժշտական գործունեության բոլոր տեսակները (ունկնդրում, երաժշտառիթմական շարժում, իմպրովիզացիա, նվագ՝ մանկական նվագարաններով, երաժշտադիդակտիկ խաղեր) սերտորեն փոխկապակցված են երգեցողության հետ:

Երաժշտադիդակտիկ խաղերը լայնորեն կիրառվում են ինչպես երգեցողության, այնպես էլ երաժշտական դաստիարակության մյուս տեսակների հետ: Երաժշտադիդակտիկ խաղերից յուրաքանչյուրը ունի հատուկ նպատակ, ուղղվածություն զարգացնելու երեխայի երաժշտական ընդունակությունները: Դրանք

են՝ հնչյունի բարձրության ընկալումը, ռիթմիկ լսողության զգացողությունը, տեմբրային և դինամիկ լսողությունը, զարգացնող խաղերը: Երաժշտության դասերին երեխաների երաժշտական գործունեությունը դառնում է ակտիվ, երբ աշակերտները ներգրավվում են երաժշտության շարժումային ոլորտը և սկսում են երգել ու կատարել համապատասխան շարժումներ, որն էլ երաժշտության ընկալումը դարձնում է ամբողջական:

Կոմիտասը նշում է, որ երգը ներքին հոգեկան զգացումի արտահայտության ձևն է, ուրեմն՝ շարժումն է. և պարն էլ, ինքնին լինելով շարժում, զարդարում է երգը: Երգեցողութան ժամանակ կատարվող պարային շարժումները, բացի բնական պահանջ լինելուց, ստացվում են նաև մեխանիկորեն և նույնպես նպաստում են աշակերտների ուշադրության կենտրոնացմանը: Ամբողջ դասի ընթացքում քարացած վիճակում նստած երեխան հոգնում է և այլևս չի կարողանում կենտրոնացնել ուշադրությունը: Նրանց պետք է ոչ միայն հնարավորություն տալ շարժվելու, այլև երգեցողության ռիթմին համահունչ դասարանում պետք է կազմակերպել այդ շարժումները: Պարերգերի ուսուցման ընթացքում նախ հարկավոր է ուսուցանել երգն ամբողջությամբ, այնուհետև ցուցադրել պարային շարժումները և նոր միայն՝ երգը կատարել որպես պարերգ:

Մեծ նշանակություն ունի, թե ինչպես է ներկայացվում երաժշտությունը երեխաներին ունկնդրելու համար: Երեխաների համար ավելի հետաքրքիր է երաժշտության կենդանի կատարում լսելը, երբ նվագող կամ երգող ուսուցիչը գեղեցիկ ձայնով երգում է և կատարում երգի բնույթին ու բովանդակությանը համապատասխան շարժումներ: Սպ. Մելիքյանը այդ մասին ասել է, որ մարդու ձայնը ամենագեղեցիկն է գոյություն ունեցող բոլոր ձայների մեջ և ամենից խոսունը՝ մարդու սրտի նկատմամբ:

Առաջին դասարանում, երբ իմպրովիզացիայի զարգացման համար ուսուցիչը երգելով հարցնում է երեխաներին նրանց անունները, որն անպայման պետք է ավարտի անկայուն հնչյունով, աշակերտը երգում է իր անունը՝ հորինելով հնչյունները անվան վանկին համապատասխան, որը պետք է ավարտի կայուն հնչյունով: Ստեղծագործական ունակությունների զարգացման հետևանքով երկրորդ դասարանի դասագրքում կան քառատողեր, որոնք աշակերտները պետք է երգի

վերածեն: Այս գործընթացը կատարվում է հետևյալ կերպ. նախ արտահայտիչ ընթերցում են տեքստը, այնուհետև՝ աշխատում շեշտված և թույլ վանկերին համապատասխան հորինել ռիթմիկ պատկերներ և հետո միայն՝ մեղեդին: Ստեղծագործական աշխատանք կատարելու ժամանակ անհրաժեշտ է խրախուսել երեխաների երգային իմպրովիզացիան, որը նպաստում է ազատ ստեղծագործական մթնոլորտի ստեղծմանը: Կարելի է կազմակերպել ինտերակտիվ աշխատանք՝ փոխելով երգի տեքստի մի մասը, հիմնականում՝ ավարտը:

Աշակերտների մոտ լադային լսողության զարգացման համար շատ մեծ դեր ունեն ժողովրդական երգերը: Հենվելով հայկական ազգային երգամտածության վրա՝ նպատակահարմար ենք գտնում մաժոր լադերի դեպքում երգել դո, ռե, մի..., իսկ մինորների դեպքում ՝ ռե, մի, ֆա..., ձայնաստիճաններով՝ համապատասխան աստիճանիկների միջոցով: Այդպիսի մանկական ժողովրդական երգերը ընդգրկված են երկրորդ դասարանի դասագրքում: Մանկական ժողովրդական երգերը կրտսեր դպրոցականը պետք է կարողանա երգել ոչ միայն աստիճանիկների միջոցով, այլև՝ նվագել մանկական հարվածային, մեղեդային նվագարաններով :

Հայկական ժողովրդական մանկական երգերի կատարման միջոցով, կրտսեր դպրոցականները ձեռք են բերում վոկալ-խոռային ունակություններ: Դասարանական երգեցողությունը համատեղ կազմակերպելու համար, հարկավոր է աշակերտներին ծանոթացնել խմբավարական չորս հիմնական ժեստերի հետ, դրանք են՝ ուշադրություն, համատեղ շնչառություն, երգի սկիզբ և ավարտ: Խմբավարական ժեստերը պետք է ուսուցիչը ցույց տա ձեռքի պարզ և հստակ դիրքերով և շարժումներով, որպեսզի աշակերտները կարողանան միասնական անսամբլով կատարել երգը:

Երգեցողությունը զարգացնում է նրանց լսողությունը, ռիթմի և լադի զգացողությունը: Փորձը ցույց է տվել, որ երեխաների երաժշտական զարգացման մակարդակն անհավասար է, որը պետք է լինի ուսուցչի ուշադրության կենտրոնում: «Եթե մանուկը չի հասկնար ձեր դասավանդությունը, հանցանքը ձերն է, որովհետև չեք կրցած հասկնալ անոր հոգին»: (1,էջ66)

Այսպիսով՝ հայկական ժողովրդական մանկական երգերը ունեն անսահմանափակ ուսումնադաստիարակչական հնարավորություններ և

հանդիսանում են կրտսեր դպրոցականների երաժշտական դաստիարակության հիմքը:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մանկավարժական գործունեության ընթացքում գիտության և տեխնիկայի զարգացման հետ մեկտեղ, արդեն կիրառվող մեթոդներից բացի անհրաժեշտ է ստեղծել նաև նոր մեթոդներ, որոնք կոգնեն ավելի արդյունավետ դարձնել կրթության որակը: Նոր մեթոդները կարելի է կիրառել ինչպես ամբողջ դասարանի, այնպես էլ առանձին, անհատ աշակերտի համար: Մեթոդները կիրառելիս պետք է հաշվի առնել.

1. Երեխայի կարողությունները

2. Գիտելիքները

3. Ընդունակությունները

4. Անձնային անհատականությունները

Մանկավարժական գործունեության ընթացքում կիրառել եմ մի քանի նոր մեթոդներ, որոնց կիրառումը օգնել է որպեսզի երեխաները ավելի լավ յուրացնեն և արտահայտեն նոր դասը: Նոր կիրառած մեթոդներից մի քանիսը ներկայացնեմ ստորև.

1. Երաժշտության ունկնդրման զարգացման մեթոդ առաջին դասարանում: Արամ Խաչատրյանի «Մանկական ալբոմի» ունկնդրումը խաղային տարբերակով: Այս խաղի շնորհիվ երեխաները սովորում են ավելի ուշադիր ունկնդրել և վերլուծել երաժշտությունը:

2. Ինտեռվալների տպավորիչ բացատությունը 5-րդ դասարանում: Գրատախտակի մոտ ենք հրավիրում ութ աշակերտների: Յուրաքանչյուրը իրենից ներկայացնում է մեկ նոտա և թռիչքների միջոցով ցույց են տալիս տվյալ ինտեռվալը, որը պահանջում է ուսուցչուհին: Այս խաղը ավելի տպավորիչ է

դարձնում ինտեռվալների ուսուցումը, այն նաև կարելի է կիրառել որպես ֆիզկուլտ դադար:

3. Շարքերի մրցույթ 4-րդ դասարանում:
   Ամբողջ դասապրոցեսի ընթացքում ընթանում է շարքերի մրջույթ, որը ամփոփվում է դասի վերջում: Այս խաղը աշակերտների մոտ զարգացնում է միմյանց հանդեպ հարգանք և պատասխանատվություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով գալիս ենք այն եզրակացությանը, որ կրթության որակի բարելավման համար, տարիներ շարունակ մանկավարժության մեջ կիռարվող «հին» մեթոդներից բացի անհրաժեշտ է կիրառել նոր, նորաստեղծ մեթոդներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կոմիտաս «հոդվածներ և ուսումնասիրություններ» Երևան 1941 Խմբագիր Ռ. Աթայան (215էջ)
2. Լեոպոլդ Ստոկովսկի «Երաժշտությունը բոլորիս համար» Հայպետ հրատ 1962թ
3. Յու. Վ. Յուզբաշյան Ա. Ա. Փահլեվանյան Վ. Ի. Ավետիսյան «Երաժշտությունը» 1-4-րդ դասարաններում «Զանգակ» հրատարակչություն 1997թ.(117էջ)
4. Վ.Յու. Յուզբաշյան «Երաժշտություն» դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի չորրորդ դասարանի համար: Զանգակ հրատարակչություն Երևան 2017 (95 էջ):
5. Յու. Վ. Յուզբաշյան «Երաժշտություն» Երևան «Լույս» 1990
6. Յու. Վ. Յուզբաշյան «Երաշտությունը առաջին դասարանում» Երևան «Լույս» հրատարակչություն 1985
7. Յու. Վ. Յուզբաշյան «Երաժշտությունը Երկրորդ դասարանում» Երևան «Լույս» հրատարակչություն 1987
8. Ա.Վ. Լունաչարսկի «Հեղափոխություն-արվեստ-երեխաներ, նյութեր և փաստաթղթեր»: Մոսկվա 1996թ. (ռուսերեն)
9. Դ. Բ. Կաբալևսկի «Հանրակրթական դպրոցի երաժշտության ծրագրի հիմնական սկզբունքներն ու մեթոդները»: Երևան 1984
10. Կ.Ղազարյան «Երաժշտադիդակտիկ խաղեր» Երևան 2005 (էջ 94)
11. Սպ. Մելիքյան «Հոդվածներ, հուշեր, նամակներ, փաստաթղթեր» Երևան 1964թ:
12. Յ.Վ. յուզբաշյան Ա. Ա. Փահլեվանյան «Երաժշտություն» Երաժշտության այբուբեն դասագիրք 12-ամյա հանրակրթական դպրոցի 2-րդ դասարանի համար: Զանգակ հրատարակչություն Երևան 2018 (95 էջ)